

12490

Lithopodium

Znithopodium

1893

691.93

2-85



891.99 ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ

Հ-85
Ա. ՈՒ Խ Ա Գ Ն Ե Ր

ՄԻՋՐԱԿԱ ԾՈՎԱԿԱՆԻՑՈՒԹՅՈՒՆ

Զար մարդիկ երգ չ'ունին:
ԶԻԼԵՐ

196
204
205
206

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

330



معارف نظارات جليله سنك ۱۳۶۷ نومزوی رخصتنامه سیله طبع او نشدر



891.99
Հ-81

Գ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆԵԱՆ Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1893

205

ՅԱՆՄՈՒՋՑ ՅԻՇԱՏԱԿ

ԳԵՂՐԳ Էֆ. ԶԱՐԴԱՐԵԱՆԻ

բ 2003

2857



Ի Բ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ի

Ս Ո Ւ Ա Գ Ն Ե Ր



Ա Ռ Զ Ի Ե Ե Կ Ը

Իմ գառնուկիս սիրտն է
Զուտ, մաքուր ոսկի.
Ինձի մշտիկ կընէ,
Կը պառկի խօսքի։

Երկու աչուկներէն
Զինքն ըրի պաշիկ.
Թարթիչները խըփեց,
Գիրկս ըրաւ պաճիկ։

Օրուան լուսէն առաջ
Կեշնէ վաղառուուն.
Թռչնիկներուն հետը
Ինքն ալ է արթուն։

Քանի վըրամն նայիմ
Սիրալս կը բացուի .
Թուշն է կարմիր խնձոր
Եւ աչուխն ծաւի :

Եկու , անուշ մարիկ ,
Մանչս օրօրենք
Եւ զիրար սիրելու
Ուխտերնիւ նորենք :

Դուն , ով աղնիս կընիկ ,
Կարժես հարկ հարկինք .
Դուն , իմ խեղճուկ տունքս
Դարձուցիր երկինք :

Ի՞նչ աղւոր է արդաս ,
Ճեղդ քեղ է ելեր .
Աչքդ աչքն է , մազն ալ
Վարսիդ սեւ թելեր :

Ուռ գառնուկս , տաքուկ
Ծոյիկըդ պառկի .
Նորէն նորէն երգէ
Երդերդ հրեշտակի :

Հ Ի Ն Ա Կ Ո Ւ Բ Յ

ԶՈՅԴ ՄԸ ԱՂՔԱՏԻԿ ԹԻՆԹԻՆՆԵՐ

Ազքատին տունը չըլլար հարկ հարկինք ,
Բունիկն է անշուք , բայց հոն է երկինք :
Հոն խաղաղ ժամեր , լուր օր , կիրակի ,
Գիշերներն են լրյս առանց ձըրագի .
Մէրն է լրյս սրտին , աշկունք թող մթնեն ,
Մութն առտու կ'ըլլայ մի քիչ ատենէն :
Չեռք ձեռքի տուած , այր ու կին թինթին ,
Քիչ քիչ մօտ կուզ ան մահուան անդունդին .
Բայց երբ ծած կըւին խոնաւ հողուն տակ՝
Մեր մէջ կը թողուն բարի յիշատակ :

Ազքատին տունը չըլլար հարկ հարկինք :
Բունիկն է անշուք բայց հոն է երկինք .
Զուն ձըմեռ օրով թրթըռիկ լաթեր ,
Խեղճուկ ծերուկին կըրակն է հասեր .
Բայց գեռ չէ մարեր սէր սրտին կըրակ ,
Կուզէ տուն դառնալլեփ լցուն տոպրակ ,
Կուրծքը հովերուն կը վաղէ չորս դի ,
Եր որբ թոռանը հաց ճարէ պիտի .
Կեցցէ , աղնիւ ծեր , ազգիդ ես պարձանք .
Վրայ ձըդոց չես , չե՛ս գլխու փորձանք :

Աղքատին տունը չըլլար հարկ հարկինք,
Բունիկն է անշուք, բայց հոն է երկինք.
Խըսիրին վրայ քով քովի դիզուած,
Մամ պատն ու թոռնիկ կը կրծեն չոր հաց.
Բայց բանի պահքն այն սիրով կը տանին,
Զրկանքի վարժած ծերն ու պատանին.
Միայն թէ հացը տունին չխպակսի,
Տարին բոլորուի առանց վընասի...
Աստուծմէ ի զատ յօյս չիկայ մարդէ,
Կուշտն անօթիկն մանըր կը ջարդէ:

Աղքատին տունը չըլլար հարկ հարկինք,
Բունիկն է անշուք, բայց հոն է երկինք.
Ծերն երբ տուն դասնայ պառուին ձայնն անուշ
Կ'ըսէ, «Ո՞ւր ես, մա'րդ, ինչո՞ւ կուգաս ուշ,
« ձակախդ քրափնքը սրբել գա՞մ քովըդ,
« Մեզը որ կը մաշախս յօժար կամքովըդ,
« Քեզի՞ է ինկեր յոդնիլ օրն ի բուն,
« Ձեռքէս որ ելնես գլխուս կուգայ ձուն.
« Հերիք զիս մատնես մահուան դողերու,
« Ասանկ տատելով հիւնդցար հերու:

Աղքատին տունը չըլլար հարկ հարկինք,
Բունիկն է անշուք, բայց հոն է երկինք.
« Ի՞նչ կուզես, հոգիս, անձարակ էրի՞կ,
Կ'ըսէ ծերուկը. « Հերիք է հերիք
« Անուշիկ կընիկ, երիւր է կարիճ,

« Հարուր տարի մը մը կ'ապրի քիչէն քիչ,
« Նորերէն վախցիր, պատասխան չխառն,
« Ո՞ւր գացին, ո՞ւր են նոր հարս նոր փեսաս,
« Ա՛խ, սիրոս է խոցուած, հողն իջան զատ զատ.
« Աննըմա՞ն հարալս, որդիս հարազատ:

Աղքատին տունը չըլլար հարկ հարկինք,
Բունիկն է անշուք, բայց հոն է երկինք.
Հոն խեղճ պառուիկը գիշեր եւ ցերեկ,
Սաղմոս կը քաղէ, կը կարդայ նարեկ,
Աստուծոյ վախով օրերն են լեցուեր,
Աղօթից թեւօք հոգին կ'ելնէ վեր.
Կիրակի առտուն կ'ընէ ճար ճարակ,
Ժամ կ'իջնէ տեսնել անմահ պատարգագ.
Ո՞վ հրաշալիք իւր սուրբ հաւատքին,
Վիշոր կ'ավոտիուի, երնեկ' քեզ, ո՞վ կին:

Աղքատին տունը չըլլար հարկ հարկինք,
Բունիկն է անշուք, բայց հոն է երկինք.
Հոն խաղաղ ժամեր, լուր օր, կիրակի:
Գիշերներն են լցոս առանց ճըրագի.
Սէրնէ լցոս սրտին, աչկունք թող մթնեն,
Մութն առտու կ'ըլլայ մի քիչ ատենէն.
Զեռք ձեռքի տուած, այր ու կին թինթին,
Քիչ քիչ մօտ կուգան մահուան անդունդին.
Բայց երբ ծած կըւին խոնաւ հողուն տակ,
Մեր մէջ կը թողուն բարի յիշատակ:

ՄԷՆ ՄԷՆ ՏԱՅԻՍ

ՄԷՆ ՄԷՆ տատիս , մէն մէն տատիս .
Ո՛վ որտիս սէր , անուշ որդիս :

Թաթիկդ ինձ տուր իմմէկ հատիկ ,
Քայէ տեսնեմ տատիկ , տատիկ .
Այն ի՞նչ աղւոր տատիս կընէ ,
Չ'եմ կըշտանար , որդեակ , քենէ :

ՄԷՆ ՄԷՆ տատիս , մէն մէն տատիս .
Ո՛վ որտիս սէր , անուշ որդիս :

Չեռքըս թող տուր , աղաս քալէ ,
Մի՛ սաք առներ հեւհըւալէ .
Մի՛ ճորճըրար , մըներ տիտիկ ,
Ապրիս , որդեակ իմ պըտատիկ :

ՄԷՆ մէն տատիս , մէն մէն տատիս .
Ո՛վ որտիս սէր , անուշ որդիս :

Ահա քալեց իմ անուշիկ ,
Տատիս ըրաւ յուշիկ յուշիկ .
Ահա որդիս ըրաւ մէն մէն ,
Մոռցայ գընայ հոգերս ամէն :

ՄԷՆ մէն տատիս , մէն մէն տատիս .
Ո՛վ որտիս սէր . անուշ որդիս :

Բռնեմ , բռնեմ , հա՛ , բռնեցի ,
Զէ՛ , չես իյնար , քիչ մը կեցի .
Մօտիկ եկու քիչիկ , քիչիկ ,
Աչուկներէդ ընեմ պաշիկ :

ՄԷՆ մէն տատիս , մէն մէն տատիս .
Ո՛վ որտիս սէր , անուշ որդիս :

Ալ մարդ եղար , ելիր ոտքի՛ ,
Քեզ չեմ օգներ առանց պէտքի .
Ասկից ետքը , անուշ որդիս ,
Ինքիր գըլխուդ քալել պարտիս :

ՆԱԽԱՎԱՐ ԳԻՒԹԳՈՐ

Ն Ա. Խ Ս Կ Զ

Դատաւորներն ինչը և նստեր կը խորհին
Արդար պատիմը տալ թշշուառ Գիրգորին.
Գիտեմ յանցաւոր եմ, ձեռքս առի դանակ,
Թող օրէնքը վըրաս տանի յազթանակ.
Միայն թողէք կանգնիմ պատիւխս պաշտպան,
Չըլլայ թէ կարծեն զիս գըճուձ մարդասպան :

Նայեցէք հասակիս, չափիս վիթիարի,
Ծովուն հետ կոռւեր եմ ես վաթսուն տարի.
Հիմա ճիսս է ծըռեր, եղայ խայտառակ,
Թիկունքըս կորացուց կինքս տնառակ.
Կարծ կասեմ, Աջըբին՝ ելաւ խելք դըրաւ,
Հստըկի մը եղայ աս է սրտիս ցաւ :

Նախանձն էրկան մը սկրտ կը կրծէ, կուտէ,
Մինչեւ ե՞րբ լըսէի, խարուեի սուտէ.
Կընիկ, ըսի օր մը, ալ ելար աչքս,
Ընտո՞ր ատ բանն ըրիր, չելլամ զարնեմքեղ.
Անկըճիդ ոսկի օդ, նազիդ փոխան սէր,
Տուն մը, կրակ, ճըրագ, ի՞նչըդ պակաս էր.
Զիս ինտո՞ր փոխեցիր խըլլատ երգովին,
Ինտո՞ր դուռըդ բացիր, տուիր անկողին :

Բերուզիկ . . . վախցար հա՞ ճերմակ մազերէս,
Թո՞ւհ քեզի, գլխաւորդ ասա՞նկ կը սիրես.
Ես ալ մարդ եմ, ես ալ տեսեր եմաղւոր,
Պատէմիք աղջիկ շա՞տ հարս քիչ քողաւոր.
Բայց աղւոր տեսնալուս չ'եկայ փափաքի,
Կեանքիս մէջ քենէ զատ մէկը չի պագի.
Հասուկ տըղաք ունինք, խելքըդ տուն կանչէ,
Ամօթ է ըրածըդ, ըլլալիք բան չ'է.
Տունըս գըժոփիք ըրիր, եղար սատանայ,
Ետքը, չեմիսանուկի, երբ աչքըս դառնայ,
Քեզ կը սատկեցընեմ, կ'առնեմ ոտքիս տակ,
Արունըդ կը խմեմ, գիտնաս հա՛, տաք տաք :

Ա՛յս, դատաւորներ ա՛յս, ա՛յս Աստուած վըկայ,
Ասանկ ըսկըսողին ետքը հոս կուգայ.
Ալ ի՞նչ երկայն ընեմ, աղտ եմ աշխրքի,
Արուն ելաւ ձեռքէս, կընիկըս զարմի.
Կործանեցայ, փըլայ, տունս է աւերակ,
Մարեցաւ կըրակիս, մարեցաւ ձըրագ.
Որբ տըղաքըս գիլուս թող անէծք տեղան,
Երբ առ գիշեր նըրտին արցունքի սեղան.
Զօրքերուն ձեռքովըս ես զիս մատնեցի,
Ալ ի՞նչ ըսկայ պէտք է, ի՞նչ դուռ դըրացի.
Խլիրըած կաւառներ մահէ կը դաղան,
Անպատիւ կեանքի ամեղ կընտքեմ կախաղան :

Փաստաբա՞ն, չըլլայ որ սա նա թախանձես,
կը խալլախիմ, կ'երթայ. մեռայ նախանձէս,

ՅՈՒՀԱԹՈՒԿԻՒՆ ԳՈՎԱԾՍԸՆ ՓԲԸ

Եահածուկիս աշուկները
Մէյմէկ դոհար են անգին .
Աշխարքիս մէջ ասանկ հարսը
Լոյս եւ արեւ է կեանքին :

Մոմին քովիկ , դէմն է նստեր ,
Հարսնուկըս կար կը կարէ .
Ի՞նչ անցյշ է մըսիթարուիլ
Եւ ոյժ դանել տըկարէ :

Իմ աղւորիկ Եահածուկըս
Առջինեկը մանչ բերաւ .
Ինք կաթ կուտայ իմթոռնեկիս ,
Կանանց պարծանքն է իրաւ :

Մոլթն իլուսուն , ժամկոչ չեկած
Աւլեր , սրբեր , կոկեր է .
Սոթարւորեր լաթի կ'իջնայ
Զիս աղատեց հոգերէ :

Զմայլեցայ վարդ այտերուն
Եւ սոկեթել մաղերուն ,
Սոխակի պէս կը ճըլըլայ .
Չեմ դիմանար նաղերուն :

Զայնը սիրէ մ , մանչը գրկեր
Անցյշ երգով կօրօրէ .
Թող հարսիս պէս հարազատներ
Միշտ ծընին հօր ու մօրէ :

Երնե՛կ ինծի , հըրեշտա՛կըս ,
Սիրալս չէնցաւ , աս ուր եմ .
Գալէդ ի վեր տունս է դրախտա ,
Ի՞նչ բաղդաւոր կեռուր եմ :

Բնել ըլլալ իմին հարսիս
Մաքուր սրախն նըշանն է .
Եփող թափող տանտիկինըս
Զը տարբերիր շոշանէ :

Փա՛ռք քեզ Աստուա՛ծ կարգըւելով
Տըղուս գըլխուն խեր եկաւ ,
Աղնիւ աղգիս զաւկըներուն
Ասանկ հարսեր տո՛ւր կարգաւ :

ՏԵՐ ԳԵՐՈՐԴ ԱՐԾԻ ԱԿՆԻ

Ո՞վ Արծըրունի, սրբակրօն տէրտէր,
 ինձ վշրել քընարս ու լոել պարտ էր:
 ինչպէ՞ս դադրեցան աշքերուդ արցունք,
 ինչպէ՞ս պարզեցան զերթ երկնից բարձունք.
 Մահն առաւ զաւակ, տղջիկ, երէցկին,
 Քեզ ուռ սուգ խոթեց կրկին ու կրկին.
 Եւ նախանձ աշխարհ, ա'յր բարեհասակ,
 Ճակտիդ բոլորեց փուշերէ պըսակ.
 Բայց դուն, անվեհեր կ'որձաւ Սուրբ Գիրք,
 Գլխիկդ, Յիսո՞ւսի հանգչեցաւ ի գիրկ.
 Եւ արդ սփոփուած կ'իջնես յարաժամ,
 ԶԱՄԱՊՈՒԱԾ հոչակել ի՛Սասգիւղ, Սուրբ Ժամ,
 Հայ Քահանայիդ պէտք չէ Յորելեան,
 Բարի անունըդ կ'ասլրի յաւիտեան.
 Հարիւր հինգ տարի սուրբ կեանք վարողին,
 Վարքն առանց քընարի ինքնին ներբողին.
 Խորտակէ՛, լըու՛, ո՞վ դու հէք քընար,
 Զոր Առուուած պատուեց պատուել չեմ կընար:

1001
1002
1003
1004



ՏԵՐ ԳԷՈՐԳ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԵՍՆԿՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆ

ԷՇտանի յաշդին տակ

ԵՐԵԿԸ

Սընանկ, ի՞նչ ամսիմ, վարկըս կոտրեցաւ,
Զը մեռայ, կ'ապրիմ, այս է սրափս ցաւ.
Շուկան կեցեր է, չի կայ առուտուր,
Բան չունիս գըլուխող քարին փատին տուր:

ԵՐԵԿԸ

Եկո՛ւ, խե՛զն մարդս, գըլուխ լիսու տանք,
Այս նեղ օրերէն կ'անցնինք անվըտանդ.
Զորս դին կործանող, վըլող վըլողի,
Սընանկներէն ո՞վ, որո՛ւ ոըրդողի:

ԵՐԵԿԸ

Կընիկ, ի՞նչ կըսես, խերքըդ չիհասնիր,
Կրնա՞ս աչք առնել չոր հաց ու պանիր,
Կրնա՞ս զրկուիլ առանց գանգատի,
Բաղդին դէմ կոռւիլ ճակատ ճակատի:

Ա Յ Ի Կ Բ

Դուն ողջ եզիր, մարդ, հոգը՝ ըբեր ես,
վաղը Սստուծ մով կ'ելլենք պարզերես,
ինչո՞ւ, չե՞ս հաւտար թէ ես կեցեր եմ,
Զեռքէս լան կուգայ, թէ քեզ կը սիրեմ:

Ե Բ Ի Կ Բ

Ինկած էրիկըդ ինսո՞ր կը սիրես,
Ծերացայ վախցիր ձերմակ մաղերէս.
Ախ, չի՞ր ուզեր հարուստ ամուսին,
Հիմա կ'ապրէիր չեն սիրու, միասին:

Ա Յ Ի Կ Բ

Դուն զիսաւորս ես, քեզ սէր ուխտեցի,
Աւ ի՞նչ աչք տընկեմ պըզտիկի մեծի.
Քեզ չետ ապրելու կը բաւէ չոր հաց,
Մաղիդ ձերմակին բնաւ չեմ խորհած:

Ե Բ Ի Կ Բ

Ո՞վ լինդում երես աղնիւ կին բարի,
Քեզ կեանքիս ընկեր պարապ տեղ չ'առի.
Բաղդըս ի՞նչ ըլլայ, գիտեմ, դուն իմ ես,
Արինչս արիւն, մարմին իմ մընէս:

Ա Յ Ի Կ Բ

Հերիք աչքիս դէմ տանջուիս, հերիք,
Օ՛ղ, մատնի՛, գոհա՛ր տար ծախէ, է՛րիկ.
Դուն բերիր, գուն տար, պէտք չ'ունիմ զարդի,
Ընեմ պարտքըս որ սիրաբս հանդարտի:

Ե Բ Ի Կ Բ

Ես, զարդի՞դ դըպիս, կընիկ, խե՞նդ ես ի՞նչ,
Քեզ ի՞նչ կը մընայ, չինե՞ր, քո՞ւրչ, կըսի՞նչ.
Բերնէս կը կտրեմ, չեմ խըմեր օղի,
Չէ՛, մատնիդ ուահէ, ուէտք չունիմ օղի:

Ա Յ Ի Կ Բ

Մէկ տարածիդ տեղ հազար կը բերես,
Թանի՛ անգամներ փորձը առւեր ես.
Հոգ չէ՛, սեւը ներս և ձերմակը դուրս,
Քիչ մը նեղ մտնել պարտքն է ամենուս:

Ե Բ Ի Կ Բ

Ես զիս կը ծախեմ, կը դառնամ գերի,
Միայն թէ կինըս երջանիկ ապրի,
Երկան կը գայլէ ըլլաւ խընօյոդ,
Գործի տակ մաշիւ, ետքը մոնել հող:

Կ Ն Ի Կ Ը

Զէ՛, այդ վեհ գըլուխոդ թող չի գոյ բարձի ,
Գիտնաս որ սիրացս քեզմով կը սկարծի .
Զիս բարձրացուցիր աշխարքի աշքին ,
Փառքիդ սիրացայ , եղայ տանտիկին :

Ե Ր Ի Կ Ը

Ինչե՛ր ալ կ'ըսես , ո՞վ սիրա մարգարիտ ,
Դուռ ինքնին բարձր ես փառքով ճշմարիտ .
Քեզմով ուսայ հայր ըլլալ անվլհատ ,
Պարտքս կը մաքրեմ , կ'ելլեմբաց ճակատ :

Կ Ն Ի Կ Ը

Ո՞վ հին օրերու էրիկըս առիւծ ,
Խորդախ սնսանի չես , գիտէի վազուց .
Տըլոցս պատւոյն պահապանն արթուն ,
Շէնքըս շընորհքս ես , սրտիս սէրն ես զուն :

Ե Ր Ի Կ Ը

Փառք քեզ Աստուած որ օտար կին չ'առի ,
Բայց ազնիւ ազգէս ազջիկ մը բարի .
Հայ ազջիկներուն պատիւն է պըսակ ,
Էրիկ կը յարգեն լի թէ սին քըսակ :

Ը Թ Մ Ե Լ Ը Ն Ի Ը

1890 Նոյեմբեր 10

Ազնիւ , վեհ հոգիք երրոր տառապին ,
Կ'երգեն հուսկ մի երգ նըման կարապին .
Եւ դո՛ւ , Մելանիա , ոգազգեաց քընար ,
Երգէ՛ , երգելէդ ես չեմ յագենար .
Դո՛ւ , վըսեմ հանձար , անդունդ , ծովհոգի ,
Ոգէ իմ հոգւոյս , խանդըդ բորբոքի .
Բայց , ո՞հ մի՛ կարծեր թէ փառք պուէտին՝
Կարապին նըման երգն ըլլայ յետին .
Տրումմ ձայնդ ի սոււդ ահիւ մի՛ մարեր ,
Թող միշտ թրթըռան քընարիդ լարեր .
Ինչո՞ւ լըռելեայն թափես արտասուք ,
Ինչո՞ւ սրտիկըդ պատեր է սեւ սուգ .
Միթէ չե՛ս գիտեր՝ ցաւոց բաժակէն ,
Ճըշմարիտ քերթողք միայն ճաշակեն :

Այս աշխարհիս մէջ, թեւաբախ կարապ,
Անդին թեւոց տակ կը գտնէ պարապ.
Մութ խորերու ծոց կ'իյնայ կ'անհետի,
Ուր թըռիչն առնուլ չը զօրէ պիտի.
Ի զո՞ւր կը փորձէ թեւերն խոր նըկուն,
Բնդ փայթ կը թազուի յայն մըռայլ թագուն.
Բայց գո՞ւն անմահ ես, կեանքդ վերջ չ'ունի,
Երդել չ'ես կարտոլ նըման թըռչունի.
Քընար ի ձեռին կանգնէ յաղթապանձ,
Երդէ կենցաղյս գաղտնիքն անթափանց.
Իջի՛ր ծազրել մահ ցուրտ չիրմին եզերք,
Անցի՛ր երկնասլաց համայն տիեզերք.
Երդէ՛ մինչ կ'ապրիս խանդիւ մշտատեւ,
Երդէ՛ յետ մահու հոգիդ բոցաթեւ :



ԴՐԱԽՈՄԱՅԻՆ ԶՈՂԸ

Ես չի խմեցի սիրոյ աղքիւրէն,
Որուն քով ծաղկունք անուշ կը բուրեն.
Դէս ի գերեզման ծռեր եմ պառաւ,
Զիս կշատցուցէք, սիրոյ եմ ծարաւ :

Հարսնիք, քօղք, պսակ չեմ ուզեր բսի,
Աղջիկ մընալով ի՞նչըս կը պակսի.
Չառի փափաքս, քօղքի եմ կտրու,
Տէրտէրն իմ ճակտիս չի կտպեց նարու:

Պարապ տեղ մարիկա կ'ըսէ՛ր «Խենդ մ'ըլլար,
Խոսք մըսիկ ըրէ՛, աղջիկըս, մի՛ լար, »
Հիմա, խեղճ կընիկ, դարձեր է սեւ հող,
Քովըս մարդ չիկայ նազըս վերցընող :

Ես չի խըմեցի սիրոյ աղբիւրէն,
Որուն քով ծաղկունք անուշ կը բուրեն.
Դէպ ի գերեզման ծըռեր եմ պառաւ,
Զիս կըտացուցէք, սիրոյ եմ ծարաւ:

Ես սիրոյ ծակեցի, ըսի, «Մարդ պապուկ
Թողլ աչք չի տնկէ աղջըկան փափուկ.
Հարուստ և աղւոր, շուտ կելնեմ ձեռքէ,
Երիկն ի՞նչ ընեմ. խաղ, պար հերիք է :»

ԱՌԻ, ի՞նչ խենդէի, ինտո՞ր չը զիտցայ,
Ինտո՞ր մօրիկանըս մեծ մեծ խօսեցայ.
Հիմա միս մինակ նստեր կը ճգնիմ,
Մեծի էր աչքըս պղտիկն ալ չունիմ:

* *

Ես չի խըմեցի սիրոյ աղբիւրէն,
Որուն քով ծաղկունք անուշ կը բուրեն.
Դէպ ի գերեզման ծըռեր եմ պառաւ,
Զիս կըտացուցէք, սիրոյ եմ ծարաւ:

ԽԵԼՄԵԳԻ ՓՐԺՄԱՆ իմ աղբարս ինէ,
Ծուտ կարգըւեյաւ, օդը օր կընէ,
Չառաւ ծախու կին, ի՞նչ ակտք ըստակի,
Իր կընկան հացը ինք կը վասթըկի:

Չունիմ չէնք չնորհք, պառուեր եմ հիմա . . .
Ո՞վ կ'ուզէ ըստակս եւ դըրախոմա .
Հիմա իմ չորս դիս առաւ մոմըտուք,
Ո՞ւր են բերողներ խօսքկապ, նըշանառուք :

* *

Ես չի խըմեցի սիրոյ աղբիւրէն,
Որուն քով ծաղկունք անուշ կը բուրեն.
Դէպ ի գերեզման ծըռեր եմ պառաւ,
Զիս կըտացուցէք, սիրոյ եմ ծարաւ:

Թողլ էրիկս ըլլար դարբին, կօշկակար,
Ի՞նչ փոյթ, ալլաքըս, զիս ալ կը հոգար .
Գիտեմ, ձեռքովըս տունս փլցուցի,
Կեանքիս պարտէզը փուշով լեցուցի :

Ես ցաւ քաշեցի կարձ իմերիս համար,
Մազերս են քըթան, չեղած տղու մար .
Հիմա խոռուեր եմ, տարիքըս լեցաւ,
Տունը մընացի, այս է սրտիս ցաւ :

— Հ Յ Հ Ֆ Հ —

Ե Բ Թ Ա ՞ Ն Վ

Ժ Ե Բ Ա Ի Կ Տ Ե Բ Տ Ի Կ Ե

Հին օրերու դըրացի ,
 Քեզի շատոնց սիրեցի .
 Սրախ սէրը կ'ընդունի՞ ,
 Ո՞վ իմ անուշ աղաւնիս :

Կարմիր երես , թուշ ինձոր ,
 Վարդէ չըթունիք մեղրածոր .
 Ծով ծով աչքեր , սեւ մազեր ,
 Մօրկանս ուղածն ալ այս էր :

Հերիք լսպնիս , կարմըրիս ,
 Շիտակն ըսէ , կուզե՞ս զիս .
 Տուն դա՞մ , մօրմէդ ուզե՞մքեզ ,
 Ո՞վ , ո՞ւր լրկեմ աղջիկաես :

Աղջկան պէտք է էրիկ ,
 Քեզ աէր կենալս է հերիկ .
 Հին օրերու դըրացի ,
 Քեզի շատոնց սիրեցի :

Եկո՞ւ , աղջիկ , չէ , մըսեր .
 Շուտ կը սորվիս ի՞նչ է սէր .
 Աղջկան պէտք է էրիկ ,
 Քեզ աէր կենալս է հերիկ :

Նըշան բերե՞մ քեզ մատնի ,
 Ըսէ' , սիրաս չի հատնի .
 Մըլլա՛ր անգութ , մըլլա՛ր չար ,
 Հա՛ , ըսելուդ չես զըզիար :

Երթա՞նք ծերուկ Տէրտէրին ,
 Օրհնէ՞ պլասակը մերին ,
 Ե'կու . աղջիկ , չէ մըսեր ,
 Շուտ կը սորվիս ի՞նչ է սէր :

Հարսն էր պակաս իմ տունէս ,
 Սրախ սիրածը դուն ես .
 Ես աղքատ դուն աղքատիկ ,
 Տուն կ'ըլլանք քըթիկ քըթիկ :

Ո՞հ , չէ մ'ըսեր , ի՞նչ կ'ըլլայ ,
Չեռքդ , սիրտդ իմն ըլլայ ,
Երթա՞նք ձերուկ Տէրտէրին ,
Օրհնէ՞ պլսակը մերին :

Եկու որ տուն տեղ ըլլանք .
Մէկ տեղ աճինք բազմանանք .
Չագուկիս ալ նորատի ,
Թոմնպուլ թումնպուլ պարտի :

Աղջիկ , կուղեմ մէկ խօսքով ,
Քեզ Աստուծոյ օրէնքով .
Ա՞հ , չէ մ'ըսեր ի՞նչ կ'ըլլայ ,
Չեռքըդ , սիրտդ իմն ըլլայ :

Քենէ ի զատ ո՞վ ունիմ ,
Զիս թէ թողուս կը մեռնիմ .
Տե՛ս , քու կրակը եմ ինկեր ,
Զիս մի թողուր անընկեր :

Սրախ ոէրը կ'ընդունի՞ս .
Ո՞վ իմ անուշ աղաւնիս ,
Աղջիկ , կուղեմ մէկ խօսքով ,
Քեզ Աստուծոյ օրէնքով :

ՏԱԼՏԱՆ

Տանտան , պէպէ՛ք , տանտանայ ,
Տա՞ն տա՞ն , մինչեւ քընանայ .
Օ՞ր , օ՞ր չուզեր , խեղճ կ'ընէ ,
Սիրտ պէտք է որ դիմանայ :

Ծափի՛կ , ծափի՛կ , ծիրանի ,
Կարմիր խնձոր կըլմանի .
Ոսկի գեղձան մազերն ալ ,
Հովը թել թել կը տանի :

Հո՛փ , հո՛փ , տըղաս , հոփալայ ,
Հո՛փ , հո՛փ , ցատկէ որ չի լայ .
Խնդում գէմքին վարդ բացուի ,
Աշխարհն ամէնն իմն ըլլայ :

Թումպո՞ւլ, թումպո՞ւլ պղտըրտիկ,
իմ գառնուկս է մէկ հատիկ.
Վաղը քունէն արթըննայ,
Շարժէ թեւերն ու տոտիկ։

Եկո՞ւ, հայրիկ, հոպաքա տար,
Զէ՛, չէ՛, մի՛ գար, չեմ խտար.
Անուշ մանչըս քուն ունի,
Քիչ մ'ալ մեծնայ, հապա տար։

Այն ի՞նչ աղւոր հայրիկ է,
Մանչըս ինձի կը ձբդէ.
Խըիէ աշուխտ անուշիկ,
Տանտա՞ն, ծափիկ հերիք է։

Աչուկ պա՞հ պա՞հ ու օ՛ր օ՛ր.
Սիրով մեծցիր օրէ օր.
Ես հայրիկին քով նըստիմ,
Երդեմ երդեր նորէ նոր։

Ահա՛ արզաս տաստա՞նի,
Հոդի կուտայ տանտանի.
Դըրի երեսն երեսիս,
Ահա՛ քունը կը տանի։

ԺՈՂՈՎՐԴԵԵՆ ԶՅՈՒԿԻՆ

ՕՐՈՐԸ

Օ՛ր օ՛ր, աղւոր մանչս օ՛ր օ՛ր,
Քեղ մեծցընեմ օրէ օր.
Հօրըդ նման մարդ եղիր,
Աշաբահնք քեղմով տեսնէ օր։

Մոցիկըս տաքուկ օրրան,
Մազերըս ծածկոց վըրան.
Մըշիկ, մըշիկ մըրափէ,
Պառկինք բերան առ բերան։

Քեղ բերի ճակտիս պարծանք,
Ամուշ արդանդն է յանցանք.
Նոր հարս էի, մայր եղայ.
Հիմա ընտանիք դարձանք։

Գիշերն եմ քովիկդ արթուն,
 Զիս կը դանես քովդ առատուն.
 Քեղի մէկուն չ'եմ հաւատար,
 Սրտիս սէրն ես կեանքս ես դուն:

Քեղի ծիծ մօր չ'եմ իտար,
 Տուն չ'եմ խոթեր կին օտար.
 Օտար բնութք մի՛ առներ,
 Հոգ չէ՛, ծըծէ՛, կեանքս ալ ատար:

Հօրմէդ մօրմէդ քաշէ ցեղ,
 Եղիր կայտառ ու զօղեղ,
 Պատիւ ճանչցիր, ժիր եղիր,
 Քեղ կաթ չի տամպարապ տեղ:

Ո՞վ որ տեսնէ թող դատէ,
 Մանչուկըս հարադաս է.
 Կունտ ու կըլոր նոնոշիկ,
 Հաղարին մէջ մէկ հատ է:



ՄՐԲՈՒՅԴԻ ՄԱՅՐԱՊԵՏ

ԱՐԲՈՒՀՆԵՐԸ ՄԱՐԱԳԵՑ

Անմահ ես, ո՞վ դու կի՞ն,
քեզ բի՞ւր երանի,
Դագաղլիդ մէջ հանդչէ
իբրեւ յօրբանի.
Մըրա՛փէ, քունդ անոյշ,
մանկունք խոռո՛ներամ
թող կապեն վեհ ճակտիդ
պըսսակ անթառամ,
Եւ թող վարդ թափթըրիեն
հրեշտակներ գոգիդ,
Լուսոյ մէջ ընկղմի
մաքրափայլ հոգիդ:
Ո՞հ թէ ինձ ալ տրուե՛ր
քընարս լարէի
Ներքողեան հիւսելու
քեզ, ո՞վ Սրբուհի,
Եւ սակայն ես ոչ սիրա
եւ ոչ երգ ունիմ,
Եւ մասանցս անհըլու
լրոէ քընարն իմ.

Բայց ի՞նչ փոյթ, թէ գեղջուկ
քընարս է լուր,
Կողբայ քեզ կին ոտամիկ
թող լըսեն դարեր։

* *

Ժամուն կոչնակները
ինչու կը չալեն,
ինչու խառեզ կուգան
որբերը լալէն.
Փըրկիչի աըղաքներ,
ի՞նչ սուդ էք մըտեր,
ինչու իրար կանցնին
Վարդապետ, Տէրաէր։
Մէկի կեցէք քիչ մը,
թողէք ներս մանեմ,
ի՞նչ կոյ, ո՞վ է մեռեր,
աչքովը աեմնեմ։
Հիմայ խելքիս կուգայ.
ի՞նչ, մարապէ՞ան է . . .
Մի՛, ո՞վ ժամկոչ, ճաղը
վեր մ'առներ գեանէ։
Զէ՛, չեմ թողուր որ զինք
տանին մեր թաղէն,

Զեմ թողուր որ ամբիծ
Սրբուհիս թաղեն։
Ե՛լ, Սրբուհի, ա'զիկ
Ե՛լ, աչքերըդ բաց։
Ա՛լ, դուն քուն ես, գիտեմ,
Թարթիճներդ խրփած։
Ե՛լ, մի՛ թողուր որբերդ
անտէր անտէրունչ,
Նայէ ինտո՛ր չորս գիր
կուլան անմըռունչ։
Եյ վաշիս, որո՞ւ կըսեմ,
Ծըռեր է հոգին,
Չեռքերը խաչաձեւ
ծալեր են կուրծքին։
Լացը ի՞նչ խեր կընէ,
պարապ աշխատանք։
Նոր հարսի քօղքի պէս,
առեր է պատանք։
Ես եմ որ ցից զարկի
հող կտրած պառաւ,
Մահը զիս հոս թողուց
եկաւ քեզ տարաւ։
Խեղճ կընիկ, ո՞ւր գացիր.
պէտք էր որ հիմակ
Քուկին չորս գիր ցաթէր
արեւ արեգակ։

Պէտք էր որ աչքըդ բաց
Փառքըդ տեսնայիր .
Աշխըրքէն կըշտացած
Աեւ հաղ մըտնայիր :
Զըսիր , «Եատ կանուխ է
ապրել կուղեմ ես ,
Կեցիր , ո՞վ մահ , մեղք է
զատուիլ որբերէս»
Անուշ գառնուկ վիզըդ
առւիր խաղաղիկ ,
Ճըղակոտոր եղար
անժառամ ծաղիկ :

* * *

Լըռեց պառաւ կինը ,
լըռութիւնն էր խոլ .
Ճաղին քով , ուժաթափ՝
ինկաւ դլխիկոր :
Տիրացու ; Գպրապետ
մեղմիւ լըռեցին .
Զայները կորեցան՝
պղտիկին մեծին :
Գաւիթը , դասին ներս ,
ամէնքն էին լուռ ,

Ո՞հ , ամէնք շուարած
կը խորհին տըխուր :
Յանկարծ բարի Հայրիկ
ելաւ , կը խօսի ,
Յամքած աչքէն արիւն ,
արցունք կը հոսի :

* * *

Ո՞ի , օրհնեալ ժողովուրդ ,
Սրբուհին ո՞ւր է .
Տեսէք , ես էլ լսցի ,
Հայրիկ տըխուր է :
Զա՛ւկըներս , գիտցէք ,
իմ սիրա ալ փըլաւ ,
Բայց իմ աչք սրբեցի ,
բերնէս ճիկ չելաւ :
Մի՛ լսք , նա որ կօդնէր .
որբին , թշուառին ,
իջան սուրբ հրեշտակներ
վեր , երկինք տարին :
Ո՞վ կուզէր որ մի կին
իյնայ շուտ ուժէ ,
Ազգին որբոց սլրոյն
այսպէս կեանք սուժէ .

Ո՞վ կուզէր որ, ափսո՞ս,
իր թռքեր խոցուին,
Թուք ու մուլով դռներ
երեսին դոցուին.
Բայց մինչդեռ հոս լալով
իր կարդ կատարեն,
Կը ցնծայ իր հոգին
երկնից կատարէն:
Այս', ցընծա' յաւէտ,
դու, ո՞վ Սրբուհի,
Բաւական կըսել ես
յաւեր յաշխարհի.
Դու, ծաղիկ հասակէդ,
կոյս, անբիծ շուշան,
Սուրբ մընալ ուխտել ես,
Խաչն առիր նըշան.
Դու, որ աղնիւ սեռիդ
աղնիւ զարդն էիր,
Գեղեցկութիւն և փառք,
աշխարհի զոհ բերիր:
Բերիր մի քիչ դրամ'
սրբերուդ օժիտ,
Ասսուած թիկունք եղաւ
սպառուած ուժիդ:
Բայց արդ, երկրորդ անգամ
լըքեալ հէդ որբեր,

Ո՞ւր է նա որ տչքէ
արցունք կը որբէր:
Ա՛յս, օքնեալ ժողովուրդ,
լոնչ օգուտ լալէն,
Նընջողք լացի ձայնավ
կելնեն կը քալէն.
Վըկայ լինի վշտացս
և երկնից բարձունք
կարացի՞ չը թափել
ես արիւն, արցունք.
Բայց արցունք հա՞յ կուտան
նօթի մի որբին,
Լացէն ի՞նչ կը շահուի
քոյր երանուհին:
Ես դիտեմ ձեր մէջէն
թէ քանիք արդէն
Բարեգութ, ողորմած
ճշմարիս մարդ են.
Ես դիտեմ թէ Հայ աղդ,
աղդ է պատուական,
Որ սկսեց մի կին,
կընէ տեւական,
Եւ, Հայրիկ իմ աղդին,
այս է իմ պատուէր.
Որ Սրբուհւոյն որբոց
առատ տաք նուէր:

Լըռեց բարի Հայրիկ
 ալ չըշուկ չը կար .
 Միայն թէ կողբային
 աղջըկունք արկար :
 Այս սուտ աշխարհին մէջ
 սրբոց ի՞նչ մնաց ,
 Արդէն մայր չունէին ,
 պաշտպաննին գնաց :
 Ո՞հ , անբոյն թռչնիկներ
 անցօղուն ծաղիկ
 Այն ձեր լըռին լացը .
 խարշեց իմ աղիք .
 Եւ ո՞հ , եւ ես լացի ,
 լացի , ո՞վ Աստուած
 երկու աշխանքս դորձնն
 աղբիւր արտասուաց :
 Եւ ո՞հ , հեկեկանօք
 ճանապարհ բացին ,
 Սեւառօղ դադաղը
 սուգով վերցուցին :
 Ըսէ , ո՞վ կին , այսպէս
 քեզ ո՞ւր կը սանին ,
 ինչո՞ւ հետզ կուգան
 ծեր եւ պատսնին .
 Ավասո՞ս օրերդ անցան ,
 արա՞գ շատ արագ ,

կեանքըդ նուիրեցիր
 սիրոյ պատարագ .
 Հիմա քեզ կ'ամփոփէ
 քընարան շիրմին
 եւ ի հող իջուցինք
 քու յոգնած մարմին .
 Հիմա գէթ դագրեցան
 ցաւերն աշխարհի ,
 եւ ալ չեր սառապիիր ,
 աղնիւ կին բարի :
 Անմահ ես , ո՞վ դու կին ,
 քեզ բիւր երանի
 Դադաղիդ մէջ հանգչէ
 իրրեւ յօրլանի .
 Թող առառու , իրիկուն ,
 ձայնիւ ըղձական ,
 Դամբանիդ շուրջն երգեն
 Սաղման , Շարական .
 Մասուռիդ մէջ անշէջ
 կերոններ վառեն ,
 Թող խունկը չը պակսի
 արծաթ բուրվառէն ,
 Եւ թող վարդ թափթղիկն
 հրեշտակներ գոգիդ ,
 Լուսոյ մէջ ընկղմի
 մաքրախայլ հոգիդ :

ՈՂԲՈՒՄՆ ՄՈՐԿԱՆ

Երկու աչքիս լցոսը մութի փոխուեցաւ,
Անուշիկ աղջիկը՝ դուն ես սրտիս ցաւ :
Վո՞յ, վո՞յ .

Ո՞հ, արեւուդ մեռնիմ, ի՞նչ ըրիմ, ո՞րդի,
Մութ աշխարհնին մէջը, ո՞ւր երթամ, ո՞ր դի,
Գլխուսինչ ձիւն բերիմ, ձեռքէսի՞նչ կուդայ .
Գացողն ետ չի դառնար . գիտեմ, ճար չկայ :
Սիրտս բանս մէյ մը կը տեսնես, վէրք է .
Իմին մէկ հատիկըս, ա՞խ, ելար ձեռքէ :
Հսեմ, մտիկ ըրէ, մի՛ մի՛ սրդողիր,
Կրակդ եմ ինկեր ես, կը դառնամ մոխիր :
Վո՞յ, վո՞յ .

Երկու աչքիս լցոսը մութի փոխուեցաւ,
Անուշիկ աղջիկըս դուն ես սրտիս ցաւ :
Վո՞յ, վո՞յ .

Աշխարհ ետիդ ձգեր, ելար ո՞ւր գացիր .
Մարիկըդ միսմինակ ինչո՞ւ թողուցիր,
Վարդի պիս ծոցիկըս օր մը բացուեցար .
Սեւ հողը քեզ ծածկեց, օրըդ ըը գիտցար :
Հիմա, Երան գլուխ, մինակ ի՞նչ կընես,
Հողուն թաց ծոցին մէջ ի՞նչեր կը քաշես .
Որդերը կը վիստան, ձազդդ կը քակեն,
Ո՞հ, մատղաշ մարմիկդ ինտո՞ր կը ծակեն ,
Վո՞յ, վո՞յ .

Երկու աչքիս լցոսը մութի փոխուեցաւ,
Անուշիկ աղջիկըս դուն ես սրտիս ցաւ :
Վո՞յ, վո՞յ .

Լուսընկայ լցոս գէմքէդ ինտո՞ր խաբուեցայ,
Սեւ սուզի մտնելս ինտո՞ր չը դիտցայ,
Սեւ ձաղը քեզ դնել ինտո՞ր թող տուի,
Զեռքովս քու վըրադ ինտո՞ր հող տուի,
Անձըրկած ձեռքերըս ծունկերուս զարկի,
Ախ, ինտո՞ր տուեր եմ անունն աշխըրքի .
Չորնալիք գըլուխըս սեւ պիտո՞ր կապեմ,
Աչքերուս արցունքըս սեւ պիտո՞ր թափեմ .
Վո՞յ, վո՞յ :

Երկու աչքիս լցոսը մութի փոխուեցաւ,
Անուշիկ աղջիկըս, դուն ես սրտիս ցաւ ,
Վո՞յ, վո՞յ .

Աւա՛զ, աշխարհք ինծի երնէկ կուտային ,
Տունէ տուն, տուն որդօք տէրնէկ կուտային ,
Հիմակ ա՛խ քաշելով ձանիկս հատաւ ,
Ժամկո՞չ, ե՛լ գնա բե՛ր պատանքիս կտաւ .
Անձրի ու ձիւն կուգայ, կը ցաթի արեւ .
Ո՞հ արեւ է մթներ իմ գլխուս վերեւ ,
Աւ հերիք ապրեր եմ, պիտո՞ր քովն ի՞նամ ,
Պիտո՞ր փոսիս դուռը ձեռքովս բանամ :
Վո՞յ, վո՞յ .

Վ Ե Գ Ե Մ Ւ Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Ք

Ոչա մեր սիրելեաց հանդիսար ուր ի քը-
նարան շիրմին կը ննջեն մեր հարք . ե'կ, ով
բարեկամ, մի լյս ժպիս արձակենք գերեզ-
մանին տխուր մթութեան վրայ: ինչո՞ւ արդ-
եօք չեմ սիրեր Եւրոպացւոյն դամբարանը .
հո՞ն, ի դուր կը ճգնին ծաղկանց տակ խեղ-
դել մահուան արհաւիրը. միթէ գերեզմա-
նին պչրանքը կմախըի մը սսկալի քրքիչին
չի ննանիր, եւ հո՞ն ուր զուարմունք կը հը-
կեն՝ ի՞նչ պէտք մարմարեաց հրեշտակներու .
վերջապէս հո՞ն ամէն ինչ քեղ կը մոռցնէ անց-
եալը, քու սրտիդ չի խօսիր եւ կենդանազուրկ
մեռելութիւն է յաւէտ... եթէ կրնաս, ան-
մահութիւն երազէ մեռելոց քաղաքին մէջ:

Այնպէս չէ իմ ազնիւ ազգիս վազեմի գե-
րեզմանատունը . տե՛ս, քանի՞ վսեմ է իւր թե-
ւատարած, հսկայ բռնչենեօք (չէլիմպինի ծառ.)

իւր հինաւուրց տապաններով, իւր մամուա-
պատ խաչքարերով: Հոս, երբոր հովը ճնչէ՝
հառաչելով կանցնի սաղարթին մէջէն, եւ երբ
հողմոց հեծեծող շունչը դադրի, շուրջդ խոր-
հըրդաւոր լռութիւն մը կը տիրէ . հոգիդ կը
յափշտակուի եւ անորմնափակ առանձնութեան
մէջ անցեալը իրեւ իրականութիւն կը պատ-
կերանայ աշացդ առջեւ: Այն հողվարքը զոր
քալ կանուանես, քաղաքի մը թաղերէն տար-
քեր չէ այլ եւս քեզ համար: Ննջեցեալներ են որ
յարութեան յուսով կը լնկողմանին հոն, ինչպէս
մեր լեզուին միայն յասուկ եղող բառը քեզ
լաւ կը յիշեցնէ զյոյս: Ո՞հ, քանի՞ քանի՞ ան-
դամ մեռելոցին օրը երկիւզած մի զգացում
զիս ի գերեզմանատուն մղած է տնկնդրել
զարիպ Տէրիւոց՝ որ իւր սուրբ պաշտօնը կը կա-
տարէ: Այնպէս ուրեմն, ովք բարեկամ, ազգա-
յին գերեզմանատունը լի է հաւատով, յուսով
եւ անմահութեամբ:

Յառաջ մատիք . գերեզմանին գուռը մնատ-
քըդ արդելով պահապան չը կայ . հոս է հան-
գըստաքարը որոյ ներեւ կամիսփակուն նահա-
տակի մը նշխարք: ինչո՞ւ են արդեօք ասպա-
նին կրկին խոռոչները — Ամեն մը մեր սիրել-
եաց վրայ արցանք կը թափէին եւ մեր սգոյն
ցողով կը լճանար խոռոչը: Գիտե՞ս թէ ինչո՞ւ

անվրէպ է գերը տապանագրին ճակատը կը զետեղուի— Ո՛՛ էն Աստուած կը հովանաւորէ քրիստոնէին գերքը՝ ինչո՞ւ են քանդակեր գործիներու պատկերը— Այս անցաւոր աշխարհիս մէջ մարդոյս բաժինն է աշխատութիւն։

Ավանո՞ս, հազա՞ր ափսոս, վաղեմի գերեղմաններն այսօր արեւույանդիման կը մերկացուին, եւ մեռելներու կողոպուտով Ամենակալին տաճարներ կը կառուցուին։

Կանդնեցէ՞ք, ո՞վ հայրեր, դուք որ խըրժիթներու մէջ կը բնակէիք, որպէս զի ձերքը-սակէն առատանաք եւ հոյակապ ժամեր կառացանէք։ ձեր անարժան յաջորդները գերեզմանակապուտներ են յաւէտ, որ իրենց ապարանք կը կամին եւ Աստուծոյ՝ մատուռն ալ շատ կը տեսնեն։

Հիմա, վաղեմի գերեզմանատան մէջ դալար խոռը կը ծածկէ մեր սիրելեաց հողակոյար, սպառ սպուռ քարեր մասուռով են ծածկուեր։ օր մը թերեւս եղիծ եւ տատակ ծածկեն մեր աշերէն այն գերեզմանը ուր կը հանդչին Քաղալ եւ երեւելի ամիրաներ՝ որոց յիշատակը այնքան քաղցր է աւանդապահ սրախն։ Բայց ո՞ր սրբապիղծ ձեռք կը յանդզնի վերցնել այնպիսի տապանաքարեր, որոց վրայի հոգեցունչ բանաստեղծութեանց հաւասար դարդիս

եւ ո՛չ մի բանաստեղծ կարող է յերիւրել։ Տես, սա զյոգ մը հարազատաց տապանը, անոնք թեւ թեւի տաւած՝ մայրենի գրկերէն գէպ ի վեր երկինք սլացան, բայց հէտ ծնողը յաւիտեան մշտնջենաւորեց անոնց յիշատակը յետապայ տաղերով։

ՍԻՐԱԿՈՆԵՐՆ ԵՐՐԵՓ ԴԻԿՈՂՈՍ ԱՂԱՅԻ

ՈՐԴԻ ԵՓՐԵՄ

Երբ կը ծաղկէի

Ես վարդի նըման,

Արմատէս շորցուց

Զիս մահըն դաժան։

Մանուկ էի ես

Ինը տար եկան,

Կարճըցուց օրերըս

Խոթեց յայս տապան։

Բայց շատ մի լաք դուք։

Ծնողք ոիրա կան

Ցիսուորն է յոյսըս

Զի գրկեր զիս Ան։

ՍԻՐԱԿՈՂԵՊՆ ՍՈՐԲԸ ԴԻԿՈՂԱԾ ԸՆԱՑԻ

ԴՈՒՍՏԾ ԻՍԿՈՒՅԻ

Անօրէն մահուան
Ուժն ինծի հասաւ,
Անուշիկ արեւըս
Ինծի շատ տեսաւ.
Կաղաչեմ, Փրկիչըս,
Այս խաւար բանտէն,
Անմահ կեանքով զիս
Ողջնցուր նորէն:
Հարս եկայ քեզի ես,
Յլառ՝ իմ Յիսուս,
Պատիկ է տարփըս,
Բայց մեծ է յոյսըս:

Յամի Տեսոն 1836 Մեպու. 14

Արդեօք մեծ ժանտամահին տա՞րին էր,
արդեօք ինչո՞ւ լեցուեր է այս թաղը վաղա-
մեռիկ էակօք: Ժամանակը կ'եղծէ ամէն ինչ.
Կը բուսցնէ մամուռը՝ որ տապանագիրը կը
ծածկէ, կ'իշեցնէ անձրեւը որ շիրիմներու շա-

ղախը կը քայքայէ, բայց աւանդութիւնը կը
յաւերժացնէ մեր հարց լիշտատակն ի մեզ:

Թո՛ղ դադրի եղերամարց ողբը վաղեմի գե-
րեզմանատան մէջ, թո՛ղ հին ժամագրոց մէջ
այդ ողբերը սերտող ա՛լ չը գտնուի, բայց քա-
նի որ իմ այս մաշած կուրծքս գեռ իւր վերջին
շոնչը չէ արձակած, աւանդութեան բերանը
պիսի լինիմ, պիսի սիրեմ ու սիրել տամ իմ
նախնեացս քնարանը, ուր եւ մեք պիսի իջ-
նեմք օր մը անխոռով ննջելու: Թո՛ղ բոնչին
շարունակէ ուրեմն տարածել իւր հովանին մեր
հարց սուրբ շիրիմներուն վրայ, խորհրդաւոր
խաչքարը եւ տապանը չը պակսի գերեզմա-
նէն, եւ թաղը իւր սահմանը չը կորսնցնէ:



Ս Ի Բ Ա Հ Ա Բ Կ Ի Կ Ո Ղ

Բըլլրուլ թառաւ բանձըր քարին,
Կիւլսց դարդեր խւր ճիկերին.
Էս լէ զուրբան կեղնիմ եարին,
Ծի մօտ սարէք Սիփնա սարին:

Սիփնա սարը տուման մըժ է,
Էս ա՛խ կէնէմ, էն լէ փօշ է.
Կասեն արախ դարդին խօշ է,
Էլպէթ կիկօն ճիպ սէրիսօշ է:

Էս սէրիսօշ էմ սիրով էնջախ:
Քոռ ու ջահնամ էղնի արախ.
Եար, դիւ մարես իմ տան օջախ,
Քեղնից մահրում կէնէմ ախվախ:

Մըտիկ դըրէք բըլլրուլ դուշեր,
Քընց զըմէն եար իմն անուշ էր.
Թուշն էլ խնձոր աչք լէ նուշ էր,
Վըր իւր ծոցի խով մըշմըշէր.

Հէնց որ կելնէր, կիջնէր պաղջան,
Կու սարսըռար ճայտին մախջան.
Աջից շողբէն խովցաւ իմ ջան,
Իմ հեշտ կեանքի տուեց վախճան:

Կի գեամ, եա՞րուկ, նոտիր խոտին,
Շուշան ցէնեմ, էս քէօ սախն.
Թեւքըս կեղնին մէջիցդ գօտին,
Տէրտէ կօխնա մըր նէրօտին:

Կ Պ Կ Ո Ւ Ն Ի Գ Ա Ս Լ Մ - Բ Ա Շ Ա

Լէ, լէ՛ · լէ՛, լէ՛ · խըրպան է,
Խասըմ — Բաշա մէյտանէ ·
Օխոք զուրուշ կունդելիք,
Քիրէճ — Խանէն կու պանէ ·

Մըր խօր, պապկէ գերեզման,
Թողի, ֆէս տեղ կի գետմ' ման ·
Խոդիս կելնէ եռոքի տակ,
Խաւտա, դիժար ա վաստակ ·

Քանի զուրպէթն եմ ընկեր,
Մէջից կօմին չըս քակեր ·
Խարսնուկ անուշ, անժառամ,
Քեղնից զատ կինն է հառամ ·

Ա՛լս, իմ աղբերք, իսդամբօլ,
Կասէք, ճո՞ջ է, փարան բօ՞լ ·
Խասըէթ մ'անէք, մեղ հալալ՝
Մըր խօր մուլքն ա ու մալալ ·

Լէ, լէ՛ · լէ՛, լէ՛ · խըրպան է,
Խասըմ — Բաշա մէյտանէ ·
Օխոք զուրուշ կունդելիք,
Քիրէճ — Խանէն կու պանէ ·

Հիմիկ լաճերս ի՞նչքան են,
Վուէ՞զի էն, կորա՞ն, ի՞նչ կանեն ·
Կըրպօ՞ն, Մըրտօ՞ն խորսոփկ,
Միրուն Շուշան նէրոտիկ ·

Հիմիկ իմ արտ ի՞նչ կեղնի ·
Խճնից մահրում կու դեղնի ·
Ցամքի ռահան, նանուֆար,
Գոմից պակսի մըր դուվար ·

Հիմիկ էս տեղ էնօթի,
Խայնիմ կապա հընոտի ·
Խոկի երգեմ երգ ռամկին,
Աչիցս արցունք հէնց ցամքին ·

Լէ . լէ' . լէ , լէ' . Խըրպան է .
Խասըմ — Բաշա մէյտանէ .
Օխտը զուրուշ կունդէլիք ,
Քիրէճ — խանէն կու պանէ :

Արեւ շողցեր է պօծառ,
Նաշխուն ադաշտ ճիեղն ու ծառ .
Երդիս վիերեւ են հաւքեր,
Կու ճըլվըւն մըր խաւքեր :

Դի՛ , նա , առաջքս են լաճեր ,
ինչքա՞ն բոյ բօսն են աճեր .
Բարով , կասեն , ի մեր սար ,
Մըզ՝ գարդ երկնից է խաւսար :

Ալի, շախշուն էմ, ի՞նչ էրի,
Ղարիպ եղէ, սիրաս կիէրի.
Լուռ կաց, աշուղ, ի՞նչ պէտք երդ,
Կիդեամ, կիդեամ իմ տիզերք:





